# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 օգոստոսի 2022 թվականի N 331 - Ա**

**«ՆՈՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 13.01.2020 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 22.08.2022 ԹՎԱԿԱՆԸ ԴՊՐՈՑԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ, ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով.

**որոշում եմ.**

1. Ստեղծել աշխատանքային խումբ «Նորավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում մշտադիտարկում իրականացնելու նպատակով 13.01.2020 թվականից մինչև 22.08.2022 թվականը դպրոցի կողմից կատարված աշխատանքներն ուսումնասիրելու համար:
2. Հաստատել աշխատանքային խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Աշխատանքային խմբին՝ մշտադիտարկումն իրականացնել սույն թվականի օգոստոսի 25-ից 31-ը ներառյալ և 3-օրյա ժամկետում արդյունքների վերաբերյալ ՀՀ Սյունիքի մարզպետին ներկայացնել համապատասխան հաշվետվություն:

22.08.2022

X

ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 22
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
«22» օգոստոսի 2022թ.
N 537-Ա որոշման

ՑԱՆԿ

«Նորավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում մշտադիտարկում իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի

| | |
|---|---|
| Մերի Գանդայան | ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/ |
| Համիկ Մնացականյան | ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ |
| Թամար Ստեփանյան | ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ |
| Նարինե Աթայան | ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ |
| Իննա Բալայան | ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ |

8/22/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Է.Մարտիրոսյան